Թէ բոյթն խաղայ՝ ի մեծ մարդոյ սիրի, և պատուի. յաւագէ իրք առնու. անկասկած բարի գտանէ. շնորհի ի մեծաց պարգևք և մեծութիւն. բարի խօսին զմամնէ առ մարդիկ. ազգ կամ եղբարք իւրով խնդան: Թէ ձախն՝ հարստութիւն և հարկիք է. աղէկ լինի իւրն. բարւոյ և գանձի հանդիպի. զինչ կամի առնու. ասեն սուտ իրք վասն իւր, և ինքն ի մեղս անկանի:

Թէ աջ խաժիլ մատն խաղայ՝ չարի հանդիպի. գէշ խօսք լսէ. ձօշան զինքն, և զուր վերաւորի. ի լեզու անկանի. վատ խօսին զմամնէ առ մարդիկ: Թէ ձախն՝ բարի է և ուրախութիւն. խորհուրդ բարի խորհի գութ գտանէ. գովք լսէ. իրք զոր կամի գտանէ:

Թէ աջ միջն մատն խաղայ՝ վէճ անկանի. վիճի և յաղթէ թշնամւոյն. բարի գտանէ՝ ուստի ակն ոչ ունի. փոխի մեծ բան. հարստութիւն շատ ըզգակ լինի իւրն ի մեծէ: Թէ ձախն՝ կռուոյ և սրանեղութեան նշան է. վիճի և յաղթէ. իրք գտանէ և խնդայ. զերծանի ի տըրտ-

մութիւնէ, և բարի գայ իւր վերայ:

Թէ աջ ծագ մատն խաղայ՝ ի բարին յիշե շատ բարի գտանէ. հարստանայ և շահի խնդրութեամբն կատարի. հեռաւոր սիրելի գայ. յստուծոյ բարի գտանէ: Թէ ձախն՝ զինքն ի բարին յիշեն. շատ բարւոյ հանդիպի ի յաւագէ մեծանայ. սրտիւ յորդորի և խնդայ, և իւր սրտի խորհուրդն յայանի:

Թէ աջ ճկոյթն խաղայ՝ ըզգակի հանդիպի. գանձ գտանէ և հարստութիւն. պարգևք յստուծոյ. զուր տրտմի. ի ձօշք անկանի և զերծանի: Թէ ձախն՝ վէճ է և աղաղակ. վատ խօսք ասեն վասն իւր. կամ բարձրանայ և հարստանայ. ի տրամութիւնէ ազատի, ի բարի տեղ յիշե ի մեծամեծաց:

Թէ աջ ձեռն ամէնն խաղայ՝ հարկի ի մեծաց. մեծարի ի մարդկանէ, հարստանայ և ցնծայ. կամ չար գայ իւրն՝ պատրաստ կացցէ: Թէ ձախն՝ բարի գտանէ՝ ուստի ակն ոչ ունի. ի մեծ մարդոց հարկիք առնու. պարգևս ի թագաւորէ. խնդայ և հարստանայ. ամէնն բարի լինի իւրն:

Թէ աջ ձեռաց ամէն մատունքն խաղան՝ տրտմի բայց յետոյ սրտհեշտութիւն գայ իւրն. չարն հեռանայ իւրմէն. Մստուած ընդ ինքն է:



Թէ ձախն՝ դանձուց և պատուոյ հանդիպի:

Թէ աջ ձեռաց վերի թաթն խաղայ՝ նախանձ և դաւ ղնեն ընդ ինքն և յաղթել չկարեն:

Թէ աջ ուն խաղայ՝ առողջութեան նշան է, և նոր հարաւս ազանի: Թէ ձախն՝ իրք անկանի իւրն և խնդայ, պարզևս յԱստուծոյ առնու. պատուի ի մեծաց:

Թէ աջ ծիծն խաղայ՝ ոռձկի և ուրախանայ ազգականքն զօրանան. սիրելիքն բազմանան. նոյն և ծանօթք շատանան: Թէ ձախն՝ հեռաւոր մարդ տեսնէ, և յընտանեաց խնդայ. մեծութեան հասանի կամ վիճոյ հանդիպի, և ակամայ վիրաւորի և դժուարի:

Թէ աջ կողմն կրծոցն խաղայ բարւոյ հանդիպի. ի չարէ և ի հոգոց ազատի. դուամշի տիրանայ և մեծութեան հասանի: կամ գործ գործէ. զոր չէ արժան. և ապաշաւէ շատ: Թէ ձախն՝ ամենեքեան սիրեն զնա. զչարն որ գաւրոց է՝ Աստուած անցուցանէ զնմանէ:

Թէ ամէն կուրծքն խաղայ՝ զոր սիրէ՝ զիրկա արկանէ. խնդման յառաջքէ. բերկրումն անձին, բարւոյ աւետիք է. հարստանայ և սէր գտանէ:

Թէ աջ կողմն սրտին խաղայ՝ բազմանան սիրելիքն՝ և ուրախանայ: Թէ ձախն՝ տրտմութիւն հասանի:

Թէ սիրան խաղայ՝ սրտնեղութիւն է: և հող իւր մարդն մեռանի. յանկարծ սրտնեղութեան և տրտմութեան հանդիպի:

Թէ աջ գիւհ թևի ներքի կողմն խաղայ՝ յօտար երկիր երթայ: Թէ ձախն՝ հիւանդանայ և շուտ առողջանայ:

Թէ աջ դիհ կողեցն խաղայ՝ շահի հանդիպի. ի տեղոցն փոխի և ի ճանապարհ երթայ. սակաւ մի տկարանայ՝ բայց յառնէ: Թէ ձախն՝ իւրն որդի ծնանի կամ զնոյն ի ճանապարհ երթայ. փոփոխումն է՝ տեղեաց ի տեղի:

Թէ աջ ողն խաղայ՝ կին առնու և զաւակ խնդման լինի: Թէ ձախն՝ զաւակ բարի լինի իւրն, և մեծութիւն գտանէ:

Թէ մէջ ողանն խաղայ՝ բարի է իւրն: Թէ աջ մնանն խաղայ՝ հարստանայ: Թէ ձախն՝ նոյն է:

Թէ երկու մնանքն խաղան՝ հարստութիւն է իւրն:

Թէ աջ կողն խաղայ՝ մեծութիւն գտանէ. կին առնու բարի. բարձրութիւն և խնդութիւն է. զոր ինչ խնդրէ յԱստուծոյ կատարի: Թէ ձախն՝ կին առնու և զաւակ խնդման լինի. ի հոգոց զերծանի. սրահեշտի և մեծ լինի:

Թէ աջ կողմն փորուն խաղայ՝ մեծանայ և



ըղակի: Թէ ձախն՝ շատ լայ և տրտմի:

Թէ ամէն փորն խաղայ՝ զինչ խնդրէ Մատուածոյ տայ նմա Մատուած:

Թէ փորն խաղայ՝ բարի է և մեծութիւն:

Թէ աջ կողն խաղայ՝ ի հիւանդութենէ ազատի: Թէ ձախն՝ յայլ ճանապարհ երթայ:

Թէ աջ կողմն կողին խաղայ՝ բարի է իւրն:

Թէ ձախն՝ նոյն է:

Թէ աջ քօյն խաղայ՝ մեծ ուրախութիւն գտանէ: Թէ ձախն՝ որպի լինի իւրեան. կամ ի մահու երկիւզէ ազատի:

Թէ պորան խաղայ՝ շահ գայ իւրն. իւր բարիքն բազմանան. զերծանի ի հոգոց. կին առնու. կամ ի կտօնէ խնդայ:

Թէ աջ կողմն փոքրափորն խաղայ՝ հարստանայ: Թէ ձախն՝ ըղակի Մատուածոյ, և յաղքատութենէ ազատի:

Թէ փոքր փորն ամէնն խաղայ՝ բարի զըոյց լէ և խնդայ. բազմանան իւր ինչքն. բարի կրնոջ զիպի. հարստանայ և մեծանայ:

Թէ երանքն խաղայ՝ մեծ բարի լինի յաւազաց. Մատուած տայ զխնդրելն. զինչ ուզէ առնու. խորհուրդն կատարի, և արուզաւակ լինի խնդման:

Թէ աջ կողմն երանքն խաղայ՝ հարստանայ:

Թէ ձախն՝ մեծանայ և ուրախանայ:

Թէ ծոյրն խաղայ՝ կամ տակն մեծանայ կամ զէն գայ իւրն:

Թէ ծածուկ մարմինն խաղայ՝ յազգէ բարի գտանէ. խնդութիւն և ուրախութիւն:

Թէ աջ ձուն խաղայ՝ հարստանայ և ծերանոյ, և իւր կամքն կատարի: Թէ ձախն՝ յայլ կին մերձենայ, և իւրն շնորհաւոր որդի լինի խիտ սրտհեշտի. հարկիք առնու և զօյլ. ի տուն ցնծութեան երթայ. կամ հարստանայ հանդիպի:

Թէ երկու ձուն միատեղ խաղան շնորհաւոր որդի լինի. Թէ աջ ձուտակն խաղայ ըղակ առնու. ուտի ակն ոչ ունի. կամ յայանի լինին գաղտնիք իւր: Թէ ձախն՝ առնու զոյ ուզէ և ուրախանայ կամ սրտնեղանք է:

Թէ ցայլքն խաղայ՝ ընդ կտօն ննջէ և ի բարին յիշէ. հասանէ իւր ցանկութեանն. զնոյն իրք որ ուզէ առնու. իւր խորհուրդն կատարի և բանն յաջողի:

Թէ ցայլքն խաղայ՝ ըղակի յիւր գործոյն. Թէ ձախն ի մեղս անկանի, և ի չարէ պատրաստ կայցէ:

Թէ աջ ձուն խաղայ լինի իւր բանն զոր առնէ: Թէ ձախն՝ խնդութիւն և սրտհեշտու-



Թիւն է. խնդման և շահի հասանի:

Թէ մէջ ողին խաղայ՝ սրահեշտի և խնդայ:

Թէ աջ կողմն ողին խաղայ՝ բարութիւն գրտանէ և յաւար վարէ: Թէ ձախն՝ նոյն է:

Թէ նստոյ տեղին խաղայ զէպի ձուն՝ չար է. տուգանաց հանդիպի. ծախուի իւր իրքն և զէն լինի. սուգ հանդիպի իւրեան. անկասկած տրտմի:

Թէ աջ բումբն խաղայ՝ մասնի ի մարդոց. սյլ աստուած յաջողէ նմա և զերծանի, և իւր Թշնամիքն մեռանին. զուր խօսին զիւրմէն զօրաւոր. ասնն բան անպատեհ: Թէ ձախն՝ սուտ ասնն վասն իւր. բարի առնէ մարդոց և չշահի. ի մեղս անկանի և սրտնեղի. բայց շուտով ուրախանայ:

Թէ երկու բումբի ներքեն խաղայ՝ իբք անկանի իւրն՝ ուստի ակն ոչ ունի. յանկարծ շահի. անշնորհ մարդոյ՝ բարի առնէ:

Թէ աջ անդամն խաղայ՝ բարի է և խնդութիւն. ցնծայ և սրահեշտի. կամ զազա զբուցեն զինքն. պակաս մի երկնչի. վախէ յիւր անձէն. տրտմութիւն է և զէն: Թէ ձախն՝ բարի է. աստուծով ուրախ լինի. նոր ազանի և խնդայ կամ ձօշան իղնքն. մարդ Թշնամանայ ընդ ինքն, և զինի հանդիպի սակաւ մի յիւր բանէն:

Թէ անդամոյ զբուցի կողմն խաղայ՝ զօրութիւն է:

Թէ աջ անդամոյ զբուցեն խաղայ՝ մեծանայ և բարձրանայ յոյժ: Թէ ձախն՝ շատ ընդակի տիրանայ:

Թէ աջ անդամոյ ներսեն խաղայ՝ սրանեղութիւն հասանի: Թէ ձախն՝ սրահեշտանք է:

Թէ աջ ծունկն խաղայ՝ մօտենայ առ աւագրս մեծութիւն և հարկիք է. կամ ի վէճ և ի դաւ անկանի: Թէ ձախն՝ առ աւագ մտանէ ի հարկիք ելանէ. կատարի իւր բանն առ աւագ. կամ զէշ զրոյց լսէ:

Թէ աջ զբուցի ծունկն խաղայ՝ մատնեն զինքն, և բարով զերծանի: Թէ ձախն՝ առժամայն զերծանի:

Թէ աջ ներսի ծունկն խաղայ՝ աւետիս լսէ: Թէ ձախն՝ ի դատաստանէ ուրախանայ և խրնդայ:

Թէ աջ սրունքն խաղայ՝ հարստութիւն է. ի մեծաց զովասանութիւն առնու: Թէ ձախն՝ հարստութիւն է:

Թէ աջ ամենայն սրունքն խաղայ՝ ահ որ կայ իւր վերայ անցանի: Թէ ձախն՝ յամենայն նեղութենէ ազատի:

Թէ աջ ողքն խաղայ՝ յոր է սրունքն, բար-



ւայ նշան է. վիճի և բարի գաանէ. ցանկոյ և  
 խնայ յիւր մօտաւորացն մարդ մեռանի. մօ-  
 տենայ առ աւագ. հարկիք աննու և մեծանայ:  
 Թէ ձախն՝ թշնամեաց յաղթէ ըռաւա բարի և  
 շնորհաւոր լինի. կամ սուգ է և արամութիւն.  
 այլ յետոյ բարի գաանէ հարկի յաստուծոյ.  
 որարգես և սէր անու ի մեծ մարդկանց և  
 հարստանայ: մեծն յարայ միմոծ զա յճ  
 Թէ աջ ներսե ոչոքին խաղայ՝ բարի զոյց  
 լտէ և ուրախանայ: Թէ ձախն՝ ի ճանապարհ  
 երթայ: այ զայ դասայ յայն ցլիկա զ յ յ  
 Թէ աջ կոծն խաղայ՝ սոյ և լաոյ հան-  
 դիպի. իւրն սիրելի մարդ մեռանի և արամի:  
 Թէ ձախն՝ խօսք երանէ իւր վերայ խնդումն  
 և ցնծութիւն է. բերկրի ի սիրելեաց. գաանէ  
 բարի յաւագաց. հասանի ուրախութեան:  
 Թէ աջ կոծի գրուցի կողմն խաղայ՝ հետ  
 մեռելի երթայ: Թէ ձախն՝ սրտհեշտանք է:  
 Թէ աջ կոծի ներսի կողմն խաղայ՝ ի մեծ  
 մարդկանց հարկիք աննու բարի և սրտհեշ-  
 տութիւն: Թէ ձախն՝ ուրախութիւն է յոյժ:  
 Թէ աջ ոտից թաթն խաղայ՝ սրտհեշտանք  
 է և ուրախութիւն յոյժ ճանրանայ ի վերայ  
 մարդկան հաստատի իւր գործն յաստուծոյ. ի  
 գործ աստուածոյն զնայ նշանակ է. ի ճա-

նապարհ երթայ. դատի վասն իւր ապրանացն  
 և դառնայ բարով: Թէ ձախ ոտիցն՝ բարի է  
 և շահ, ըռգակն շատանայ մօտենայ առ ա-  
 ւագ և փառաւորի. ճանապարհ է խնրան և  
 բարձրութեան. մտանէ յարքունիս շատ խնայ  
 և հարստանայ: ի զ զրտամ յարայ զարտամ  
 Թէ աջ ոտից կոծն խաղայ՝ զինի հանդի-  
 պի և յետոյ ըռգակի: տ յամ յճ. զանուայց  
 Թէ աջ կրնկան կախ ջին խաղայ՝ օտար  
 զոյց լտէ: Թէ ձախն՝ ասլլաթ անու և սրտ-  
 հեշտի: ի յոյժն յարայ մեծն յայն յճ  
 Թէ աջ ոտից ներքանքն խաղայ՝ ի ճանա-  
 պարհ երթայ. վերք հասանի իւրն. հերք յիւր  
 սողէն. ի ճանօթից արամի. ահի իրք հան-  
 դիպի. բայց յետոյ բարի լինի իւրն. ի արամու-  
 թիւնէ պատի. իրք գտանէ և շահի. հարս-  
 տանայ և խնայ: Թէ ձախն՝ ի ձեռն աւա-  
 դաց, մեծութիւն և իշխանութիւն և հարկիք  
 անու. իւր բանն յաջողի. ի դարպաս մասնէ  
 մեծանայ և հարստանայ: մտն մտն զա յճ  
 Թէ աջ ոտից ամենայն թաթն խաղայ՝  
 արամի յիւր սողէն, հեռանայ յազգէ իւրմէ.  
 նոյն և թեթեանայ առ ճանօթս իւր. կամ ի  
 ճանապարհ երթայ և իշխանութիւն գտանէ  
 և շահի: Թէ ձախ ոտիցն՝ հեռանայ յազգա-



կանացն և տրամի. սակաւ մի հիւանդանայ և  
ապրի. ի ճանապարհ երթայ. հարկիք և շորհ  
առնու՝ ուստի ակն ո՛չ ունի. մեծանայ և բարձ  
բանայ:

Թէ աջ ոտից ներքեն կամ վերին խաղայ՝  
ի ճանապարհ արդիւնաւոր երթայ մեծութեան  
հասանի և սրահեշտի յանկարծ խնդայ և հա  
րըստանայ: Թէ ձախ ոտիցն՝ բարի լինի իւրն  
յանկարծակի յաւաղաց ոռձիկ առնու. խնդայ  
ի ճանապարհի. սէր է և բարձրութիւն:

Թէ ոտից մէջն խաղայ՝ մարդ վիճի ընդ  
ինքն և ծեծվի:

Թէ աջ կրնկան վերեն խաղայ՝ օտարանայ  
յերկրէ, և զոյց ըէ բարի: Թէ ձախն՝ ի մէջ  
չարոյ անկանի:

Թէ աջ կրունկն խաղայ՝ մեծութիւն է.  
բայց հեա մեռելի ընթանայ. մատնն զինքն և  
բարով զերծանի: Թէ ձախն՝ տօվաթ և բարի  
է. ուրախանայ և խնդայ:

Թէ աջ ոտն ամէնն խաղայ՝ ի ճանապարհ  
երթայ: Թէ ձախն՝ բարի գայ իւրեան՝ ուստի  
ակն ո՛չ ունի:

Թէ աջ ոտից բոյթն խաղայ՝ գնայ յիւրմէն  
տրամութիւն, հեռաւորն գայ. ի մարդկանէ շա  
հի և հարստանայ: Թէ ձախն՝ առողջութիւն է

անձին. հեռաւոր սեասնէ. սիրելիքն բազմա  
նան. յԱստուծոյ բողակի և խնդայ, և ամե  
նեքեան սիրեն զնա. կամ ցաւք դէպի իւրն և  
հիբօնգննայ սաստիկ:

Թէ աջ ոտից խաթիլ մատն խաղայ՝ հիւան  
դանայ մինչ ի մահ. տրամի և վախէ. բայց  
յետոյ բարի լինի իւրն. ի վորձութիւն անկա  
նի և ազատի. և իւր գնացած մարդն գայ:  
Թէ ձախն՝ հարստութեան և հարկեաց՝ մե  
ծութեան և խնդութեան հասանի. կամ վէրք  
ընդունի ի սայոյ՝ և արտմի. վախէ ի շառէ որ  
ո՛չ գայ իւրն:

Թէ աջ ոտից միջի մատն խաղայ՝ սրանե  
ղութիւն գայ. ի վիշտ և ի տրամութիւն ան  
կանի. և մեծ փոթորակ գայ իւրն. մարդ կը  
ռուի ընդ ինքն և ծեծվի. և չար լինի: Թէ  
ձախն՝ վիճումն է. ի մեծ անողակ անկանի.  
գուժ առնու. բազմանայ կտիւ. մեծ զէն ան  
կանի ընդ ազգականի և վիճի կամ ցնծումն է  
մտացն. սիրով յետ մարդոյ անաչխ առնէ շատ  
բայւոյ հանդիպի և ուրախանայ:

Թէ աջ ոտից ծայր մատն խաղայ՝ գտանէ  
զինչ ուղէ. հարկիք և սէր. կամ վիճի ընդ  
ծանօթի և թշնամիքն շատանան: Թէ ձախն՝  
յազգէ հեռանայ. բաժանի ի տան, և յորդ



ւոցն. զնայ յայլ տեղ և յաջողի կարի հան-  
գիստ և ըստ լինի. բամբասեն զինքն առ կա-  
նայս:

Թէ աջ ոտից ճկոյթն խաղայ մեծութիւն  
և հարստութիւն տայ Աստուած իւրն. լինի  
պոր կամի. յաւազաց շորհք առնու. ընդտի  
և բարւոյ հանդիպի. կամ իբր կորուսանէ: Թէ  
ձախն արտառ յաւազէ. աղմուկ ի սիրելեաց.  
վերք ի յաւազաց. անպատէհ բան լէ. յաղ-  
թեն ազգահանքն իւր. կամ ի վաճառէ շահի.  
գանձ և առողջութիւն և շատ բարի դոսանէ:

Թէ աջ ոտից ամէն մատուցն խաղան. հե-  
տևակ ի ճանապարհ երթայ. բարի լինի իւրն  
և խնդայ. ցնծութիւն և մեծ սէր գտանէ.  
պարգևս առնու ի յԱստուծոյ. հեռուոր օ-  
տար մարդ ծանօթանայ ընդ ինքն. ի մարդ-  
կանէ պատուի և բարւոյ հանդիպի: Թէ ձախ  
ոտիցն խիստ դատումն է. նեղութիւն է և  
վերք. ցաւք լինի. սրտնեղի ի խօսից. աղքա-  
տանայ և դարձեալ փորձի:

Թէ տափողն խաղայ խնդայ և ի ձի հեծ-  
նու և ի բարի ճանապարհ երթայ:



Ա	Բ	Գ	Դ
Ե	Զ	Է	Ը
Թ	Փ	Խ	Լ
Խ	Շ	Կ	Հ
Ղ	Ղ	Ճ	Մ
Յ	Ն	Ը	Ո
Չ	Պ	Ջ	Թ
Ս	Վ	Տ	Ր
Յ	Ի	Փ	Ք





Ա.

Ամենասուրբ Արարողութիւնն փրկէ զքեզ  
 յամենայն փորձութենէ. փառատեցաւ ցաւ սրբ-  
 ափ քո. մեծ ուրախութիւն և շնորհ գտանես  
 յԱտուածոյ, և դու բարձրանաս մեծ պատ-  
 ուով: Այլ յորժամ բնծայեցար ի ծնողաց քոց՝  
 մեծ հիւանդութիւն կրեցեր, և հալածական  
 եղեր յազգականաց քոց և ի բարեկամաց: Բայց  
 պատրաստ կացո՛ւ գանձն քո ի գազանաց և  
 յանօրինաց. զի փոթորիկ կայ առաջի քո, և  
 չարախօսքն քո շատ են. զիս՝ աղօթք արա՛  
 առ Աստուած՝ որ փրկիս ի նոցանէ. և զինչ  
 բան զոր խորհեալ ես՝ կատարի ի բարին:

Բ.

Բանն Աստուած անսկիզբն՝ որ ի հօրէ ա-  
 ռաբեցաւ, նա է յոյս նեղելոց, և փրկէ զքեզ  
 յամենայն փորձութենէ. ի բաց մերժեցաւ նե-  
 ղութիւն սրտի քո. և կատարեցաւ վիճակն քո ի  
 բարին. զինչ բան սկսեալ ես՝ Աստուած յաջողէ  
 քեզ և առաջնորդէ: Արդ արա՛ զխորհուրդ քո.  
 Թէ վաճառ ունիս՝ շահիս, թէ ի ճանապարհ  
 երթաս՝ բարեաւ դոս, թէ ի հեռաւոր տեղեւ

մարդ ունիս՝ բորով տեսնես, թէ հիւանդ ու-  
 նիս՝ շուտով առողջանայ, զինչ կորուսեալ ես՝  
 գտանես: Ի՞նչպիսի զգացում արաս՝ մտնելով  
 այս աստուածոյ մտքի մայրո՞ւմ աստուծոյ  
 շառնի բեց. փնտաս՝ զձեզ լո՞ւս մ՝ ճառու

Գ.

Գնա՛ մի՛ ինչ հարցանէր՝ զի բազում նե-  
 ղութիւն ունիս. և արտանօթիւն կայ առաջի  
 քո. և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. և  
 եհաս ի վերայ քո նեղութիւն մեծ, ոչ գտաւ  
 քեզ բարեկամ որ և օգնական. ի հայրենական  
 ժառանգութենէն զրկեցար, և այժմ տարակուս  
 մեալ ես վասն կենացդ: Արդ աղաչեա՛ զԱս-  
 տուած՝ և ուխտ եւո՛ւմս, որ կործանէ ըզ-  
 թշնամին քո, և հանէ զքեզ ի նեղութենէ ի  
 հանգիստ, և զկտրէն սրտի քո՝ ի բարին կա-  
 տարէ:

Դ.

Դու ո՞վ սիրելի՛ վասն այդ բանիդ հարցա-  
 նես և հոգաս հանապազ. բայց Աստուած փրկէ  
 յամենայն նեղութենէ զանձն քո. և յանկար-  
 ծակի հարգամտաս յայնպիսի տեղեաց՝ ուստի  
 ակն ոչ ունիս. և բանայ՝ քեզ Աստուած դու-  
 որն բարի: Ի ճանապարհ երթաս, բարեաւ  
 յետո դառնաս, և թշնամին քո յամօթ լինի  
 եթէ հեռաւոր ունիս՝ տեսնես. վիշտք մահու



արամեցուցին զքեզ՝ բայց մոռանաս զայն. փռ-  
խիլ կամիս ի տեղոջէ ի տեղի, սակաւ մի համ-  
բերեան և սպա փոխեաց, և բարի գտանես,  
մեծանաս և ուրախ լինիս. յուսանաւ Ես-  
տուած՝ և ոչ երբէք հասանի քեզ վնաս:

Ե.

Արանի է քեզ ով սիրելի՝ զև Եստուած է  
քեզ օգնական. բայց դու շատ ես աշխատեալ,  
և ոչ գտեր հանդատութիւն, և ոչ օգնական  
քեզ՝ ոչ եղբայր և ոչ սիրելի: Որպէս ի ծովու  
ծփիս յալիաց, և ոչ գտանես հանգիստ. ով  
սիրելի տուր փառս Եստուծոյ՝ զև ուրախու-  
թիւն հասանի քեզ ի նմանէ և առողջու-  
թիւն. թէ փոխիս ի տեղեացդ՝ բարոյ հանդի-  
պիս, և ամենայն դժուարութիւն ի բարին  
դառնայ. ի յաւազաց պատրաստ կաց. որոգայթ  
երեւի քեզ, ի յընկերաց և ի մասնողաց պատ-  
րաստ կաց:

Զ.

Օարմացեալ եմ ով այլ՝ զև երկմտեալ ես  
և ի թշնամեաց ստտանիս, և խորհիս վասն մե-  
ծանալոյ, և ոչ խորհիս առնել զորաչանս Ես-  
տուծոյ. վասն այնորիկ եկն ի վերայ քո նե-  
ղութիւն մեծ, և թշնամին քո զօրացաւ ի վե-

րոյ քո: Պնա աղաչեա զԵստուած և ուխտ  
կատարեալ նմա՝ զև հանցէ զքեզ յամենայն  
նեղութիւնէ, և ազատիս յորոգայթէ վաճառ  
ունիս՝ սիրով շահիս:

Է.

Ով այլ՝ առնուս զոր խորհիս և ուրախ լի-  
նիս և ազատիս ի չարէ. գնա գոհացիր զԵս-  
տուծոյ, և Եստուած հանէ զքեզ յամենայն  
նեղութիւնէ և որոգայթէ. զև դու բարի կամիս՝  
և Եստուած բարի առաջնորդէ քեզ. զինչ բան  
զոր սկսեալ ես, յաջողէ քեզ Եստուած. զոր  
ցանկաւ տեսանես, զոր կորուսեալ ես՝ գտա-  
նես. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ, թէ տուն  
շինես կամ հաղորդութիւն առնես՝ բարի գայ  
և արդիւնաւոր լինի. ի կախարդաց պատրաստ  
կաց:

Ը.

Ով մարդ՝ ժամանակ դժուարութեան եկն  
ի վերայ քո. և արամեցար յազգականաց քոց  
և ի բարեկամաց. և ազգն քո նենգաւոր եղեն  
քեզ. և եղև աւերումն տան քո. և շրջեցար  
դու ի վերայ երկրի Եւրոպոս գոհացիր զԵստու-  
ծոյ՝ զև գաղտնէ քեզ ուրախութիւն մեծ. և  
զով խնդրես՝ տեսանես. թէ ի ճանապարհ եր-



Թոս՝ բարով յեառ կառնաս. զինչ քան արնես՝  
յաջողէ քեզ Աստուած. զուխան զոր խառ-  
տուցեալ ես Աստուծոյ կատարես. Թէ վաճ  
ճառ առնես շահիս

Թ.

Այլ յաջողեցար ի բարին. զոր ունելի. զըր-  
կեցար յայնմանէ. ոչ կայր քեզ օգնական, ոչ  
եղբայր. և ոչ սիրելի. Ինչոք որ անխորհրդես,  
և աղօթից ծոյր վասն այնորիկ եկն ի վերայ  
քո նեղութիւն, և դու շրջեցար յօտար երկիր՝  
բայց ոչ գիտանցար. Ապա թէ ոչ դառնաս ի  
կամս Աստուծոյ, գայ ի վերայ քո բարկու-  
թիւն Աստուծոյ, և լինի յափշտակութիւն քն-  
չից քոց և աւերումն սան քո. և դորժ ան-  
ուայ քոց՝ ոչ յաջողի. և զով խնդրես՝ ոչ տե-  
սանես. զոր կորուսեալ ես՝ ոչ գտանես. Այլ  
թէ դառնաս ի կամս Աստուծոյ, նա փակեալ  
դու մի բանայ քեզ և յաւելու բարիս. Գնա՛  
աղօթք արա առ Աստուած, և ուխտ կատա-  
րես. որ ազատիս ի տանջանացք:

Թ.

Օր ինչ ի ձեռին քում քան ունիս՝ յա-  
ջողէ քեզ Աստուած. և արս զխորհուրդ սրտի  
քո: Աւետիս տուր անձին քո՝ զի ուրախանայ

ի դորժ դոր ի ձեռիդ ունիս. մեծ օգուտ և  
և շահ գտցես անտի, և բազումք կերիցեն քզ-  
վաստակս ձեռաց քոց: Այլ հիւանդացար շատ՝  
որ ի մահ մերձ եղեր, և Աստուած եհան քզ-  
քեզ ի նեղութենէ և ապրեցոյց: Ի հեռաւոր  
տեղեաց ուտի ակն ոչ ունիս՝ բարի գալոց է  
քեզ և տրամութիւն քո՝ յուրախութիւն փո-  
խարկի. զի դու բարի կամիս և Աստուած բա-  
րի առաջնորդէ քեզ. և դաւակ մի շնորհաւոր  
լինի քեզ: Գնա՛ աղաչեա զԱստուած և ուխտ  
կատարես նմա. զի ողորմութիւն նորա եկեա-  
ցէ ի վերայ քո. Թէ ի ճանապարհ երթաս՝  
բարով դաս՝ և բարւոյ հասանիս:

Ի.

Ով սցր՝ մի ապաւինիր ի խորհուրդ քո և  
մի մտանար զուխան Աստուծոյ. և տրամու-  
թիւն քո՝ յուրախութիւն փոխարկի. ի հեռա-  
ւոր տեղեաց՝ ձայն աւետեաց լսես, կամ հե-  
ռաւոր մարդ տեսանես. և Աստուծոյ յաջողու-  
թիւն գտանես. և դարման ոսկերաց քոց ոչ  
պակասի. բայց ճնորդաց քոց զիմադարձ մի լե-  
նիր. և զոր ինչ խնդրես յԱստուծոյ՝ տայ քեզ  
Աստուած: Աւ փոխիլ տեղոջէ ի տեղի բարի  
լինի քեզ. և յամենայն դժուարութենէ ապա-







քո. և ինչ գործոյ ձեռն արկաննս, ոչ յաջողի. և որում ցանկաս՝ ոչ հասանիս. և զոր կորուստեալ ես՝ ոչ գտանես: Ապա թէ դառնաս ի կամս Աստուծոյ և զպատուիրանս նորա պահես, որորմութիւնն Աստուծոյ հասանէ ի վերայ քո և յաւազաց մեծարիս. և յաւելու փառք քո: Արպէս արեգակն ի վերայ արարածոց՝ այնպէս Աստուծոյ բարին հասանէ ի վերայ քո, և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս. և սարին բարով գայ քեզ:

Հ.

Այլ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի դու բարի կամիս և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և տէր վրկէ զքեզ յամենայն որոգայթէ: Ի ինիս ցանկալի ամենեցուն և ոչ լինի պակասումն ընչեց քոց. և այս քեզ Աստուած փառք և մեծութիւն: Գնա աղաչեա՛ զԱստուած և ուխտ կատարեա՛ նմա՝ որ աղատիս ի չարէն. զինչ խորհուրդ որ ունիս՝ արա՛ և մի երկնչեր. զի որպէս կամիս դու, այնպէս կատարի գործք քո:

Զ.

Այլ մարդ՝ ձայն ցնծութեան և ուրախութեան մատուցանեմ քեզ. զի դու սաօանեցար յազգաց և ի բարեկամաց քոց. և ի շատ իրաց

զրկեցար: Տուն քո հայրենի՝ դարձաւ ի յաւեր, և դու չըջեցար ի վերայ երկրի. և սուգ մահու տրտմեցոյց զքեզ. այլ այժմ փառք սուր Աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն մեծ. բազմանան ինչք քո, ոսկին և արծաթն: Թէ հեռաւոր ունիս գայ. և զինչ խորհուրդ ունիս կատարի:

Ղ.

Այլ մարդ՝ պարզեցաւ արձակումն կապանաց քոց. որպէս մոզքն որ ելին յարեւելից և եկեալ առ Բրիստոս գտին վնա և ուրախեցան, նոյնպէս և դու ուրախանաս ի գործս քո և ի խորհուրդդ զոր խորհիս: Թէ ի ճանապարհ երթաս՝ բարով յետս դառնաս և բարի գտանես: Արպէս Սովսէս յաղթեաց փարաւոսնի և եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթեալ թշնամեաց քոց. և զինչ խորհեալ ես՝ գնա աւրա՛, ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած:

Ճ.

Այլ մարդ՝ զոր հարցանես՝ ստեմ քեզ. եղեր դու ի մանկութենէ քումնէ հալածական. և պանդխտութիւն կրեցեր զամենայն աւուրս կենաց քոց. և սապանեցար յազգաց և ի յանուրինաց: Այլ սիրելի մի երկնչեր՝ զի հասեալ է



քեզ ուրախութիւն և հատարեցաւ զլիճակն քո  
ի բարին. զինչ խնդրես ի Աստուծոյ տայ քեզ  
Աստուած. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով  
զանկ յայտարարեց յարմարս զքո խոճոսս  
անճարճիս և միկտ **Բ.** Գնի մասնակցաց ծնն

**Ո**վ այր՝ նենգաւոր տեսանեմ գքեզ. արգ ի  
չարդ յիմարեալ ես և ընկերի բուն չար առ-  
նես. և ամենեցուն փնտս խորհիւ: Ընկեան ըզ-  
նենգութիւն ի մասց քոց. և ընկերիդ չար մի  
խորհիր որ չանկանիս ի մեծս նեղութիւն, և  
պատուհասս գայ ի վերայ քոս: Այ խնդացիր ի  
ճնողաց և որչա ի գրեականց ինչ գործոյ ձեռն  
արկանես՝ ոչ յաջողի քեզ: Ապս թէ դառնաս  
ի կամս Աստուծոյ և ընկերի բուն և ամե-  
նայն մարդոց նենգութիւն ոչ տանես, և ճագէ  
Աստուած զողորմութիւն իւր ի վերայ քո և  
ոչ լինի պակասումն ընչից քոց. և մեծաւ պա-  
տուով փախճանիս:

**Յ.**

**Ո**վ մարդ՝ աւետիս ապա՛ քեզ. զի կատարե-  
ցնու զլիճակն քո ի բարին. և դու խորհուրդ  
ունիս ի սիրտդ և ապրակուսիս, մի երկնէն ի  
զնոս արա. զի խորհուրդ քո ի բարին կատա-  
րեցաւ: Արդէս լուծի են որ զեաւար զիշերն

լուսաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ քո  
զոր խորհի. և հասանէ քեզ բարութիւն ի  
Աստուծոյ. և ում զցանկաս հասանիս. և յա-  
ւազաց բարի գտանես. և աւետեաց ձայն լսես  
և խնդաս զնա պղպշեան զԱստուած որ ի սոր-  
տակէ գքս թշնամիս ի խոճոսս: Եր յամս որ  
տասս **Գ.** Գնի մասնակցաց յամեցայ քեզ

**Ո**վ մարդ՝ ահա ի նենգութիւն տեսանեմ  
գքեզ. զի մեծամեծ փոսնդ կայ առաջի քո: և  
ի նեղութիւն անկանիս: Բազումք խորհին քեզ  
չարիք, և դու ոչ իմանաս զխորուստ անձին քո.  
և զի ոչ առնես զկամս Աստուծոյ՝ փանս այն-  
րիկ եկն ի վերայ քո նեղութիւն. զինչ խոր-  
հուրդ ունիս՝ ոչ կատարի. թէ ի ճանապարհ  
երթաս՝ ոչ լինի քեզ բարի: Այլ թէ դառնաս  
ի կամս Աստուծոյ և դուխան զոր խոստացիալ  
ես կատարես, յաջողութիւն գտանես, և յա-  
ւելու փառք քո:

**Ե.**

**Ո**վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի  
քո. առնուս պարգևս ի մեծամեծաց. ուր բա-  
խանաս և բարուդ հանդիպիս խնդաս ի դա-  
ւակէ և ի կնոջէ բուժիկ և լինիս յիշատակ  
ճնողաց քոց: Եւ զինչ խնդրես ի Աստուծոյ՝



առնուս. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հե-  
ռաւոր ունիս՝ գայ զոր տեսանես. թէ հիւանդ  
ունիս՝ ողջանայ. և օր քան զօր լաւ լինի քեզ:

Ուսմամբ միայն բարեւոյն չի բերուիլ. զի մարդ՝ պարտ է քեզ յամենայն ժամ  
զոհանալ զԱստուծոյ, զի թէպէտ արամեցար,  
բայց դարձեալ ուրախանաս, և շնորհն Աստու-  
ծոյ հասանէ ի վերայ քո: Այլ պատրաստ կաց  
ի չարեաց. և պարզե և շնորհ ի Աստուծոյ  
առնուս. և յորդոց խնդաս. և լինիս ցանկալի  
ամենեցուն. և ոչ լինի պակասումն ընչեց քոց:  
Թէ փոխիս ի տեղոջէ ի տեղն՝ բարւոյ հան-  
գիալիս. ձայն աւետեաց լսես. և հեռաւոր մարդ  
տեսանես. քո մահն ի բարի օր լինի. և երա-  
զըն որ տեսեր՝ բարի է:

Զ.

Ով մարդ՝ փառաւորիս յամենեցունց. և առ-  
նուս բարի իշխանութիւն, և թշնամին քո յա-  
մօթ լինի. և յօտար երկիր գնաս, և առնուս  
պարզես. և յամենայն դժուարութենէ ազա-  
տիս. և զով խնդրես՝ բարով տեսանես. և ուժ  
ցանկաս հասանիս: Գնա՛ աղաչեա՛ զԱստուած  
և ուխտ կատարես նմա, որ ազատիս ի շատ  
չարէ և ի փորձանաց. և բանայ քեզ աէր Աս-  
տուած՝ զուռն բարիս:

Պ.

Պարզե բարեաց տացէ՛ քեզ Աստուած. չա-  
րըն հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն Աս-  
տուծոյ: Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս  
ամենեցուն. բայց պահես՝ զանձն քո ի չար  
կամաց. և զոր ինչ գործես՝ ի բարին առաջ-  
նորդէ քեզ տէր Աստուած: Յաստուած ա-  
պաւինէ որ կործանէ զքո թշնամին. և հանէ  
զքեզ յամենայն որոգայթէ. և լինիս ցանկալի  
ամենեցուն. և ոչ լինի պակասումն ընչեց քոց:

Զ.

Ով մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար. զմտաւ  
ածես և ոչ կարես կալ ի վերայ միոյ խորհր-  
դոյ. դու մի՛ տրամիր՝ գալոց է քեզ ուրախու-  
թիւն մեծ՝ ուստի ակն ոչ ունիս. զի դու բա-  
րի կամիս՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ:  
Փոխանակ տրամութեան՝ ուրախութիւն լինի  
քեզ. բարի և շնորհ ի Աստուծոյ առնուս:  
Գնա՛ արա՛ զխորհուրդ քո և մի՛ տարակուսիր.  
Թէ վաճառ առնես՝ շահիս. թէ ի ճանապարհ  
երթաս՝ բարով գաս. այլ ի վերայ բախտիդ  
քննութիւն՝ առնես և հարցանես, Աստուած  
բանայ քեզ զդուռն բարւոյ, և յաւելու փառք քո:



Ռ.

Ով մարդ՝ սասանեցար յազգաց և ի յանօրինաց. հասաւ ի վերայ քո տրտմութիւն, և եղև աւերումն տան քո ի բարեկամաց քոց. և խորհուրդ քո հանապազ ի կորուստ ելանէ: Ով այր՝ մի հոգար զի շուտ գայ ի վերայ քո բարին. և տէր Աստուած հանէ զքեզ ի խաւարէ ի լոյս, և քո բաղձանացդ հասանիս:

Ս.

Ով մարդ՝ վասն կենաց քոց ընդէր հարցանես. զի՞նչ յիմարեալ ես և չար խորհիս. և ամենեցուն վնաս առնես. ի տեղըն ի տեղի փոխիս՝ և ուրեք ոչ հաստատիս. զոր կորուսեալ ես ոչ գտանես: Բնկեա՛ զնենգութիւն ի մտաց քոց. ընկերի քում և ամենայն մարդոյ չար մի խորհիր. թէ չտես՝ փորձանաց հանդիպիս. զնա՛ աղաչեա՛ զԱստուած որ աղատիս ի չարէ: և զաւակ մի խնդամիտ տեսանես և տայ քեզ

Վ.

Ով սիրելի՛ սուր փառս Աստուծոյ. զի գալոց է քեզ ուրախութիւն ուստի ահն ոչ ունիս: Եւ ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ. և զաւակ մի խնդամիտ տեսանես և տայ քեզ

Աստուած առողջութիւն. սրտորստ կաց ի չարէ որ չանկանիս ի փորձութիւն. և զինչ բանն ունիս ի ձեռին՝ ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած. ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես. զնա՛ արա զխորհուրդ քո:

Տ.

Ով մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ քեզ. զի դու վարանեալ ես և տարակուսեալ. զորաբախտ ես, զոր ինչ տաս՝ կոչով առնուս. ում բարի առնես՝ նա քեզ չար առնէ: Այլ աղօթից և աղաչանաց դու մի՛ դադարիր. գալոց է քեզ ուրախութիւն ուստի ահն ոչ ունիս. հեռաւոր ունիս գայ. թէ աղքատ ես՝ հարստանաս. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ:

Բ.

Ով մարդ՝ ցնծութիւն և ուրախութիւն տամ քեզ. զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և ցանկաս հասանիս. բայց թշնամիքն քո շատ են. այլ դու մի երկնչիր ի նոցանէ՛ զի Աստուած է քեզ օգնական: Պատրաստ կաց որ չմտանես ի բանդ. իրաւի տուգանք տաս, այլ իրք զոր կորուսեալ ես՝ գտանես: Ի ճանապարհ կամիս երթալ, մի՛ երկն-



չիր՝ զնա. ընդ որ երթա՛ս՝ բարով գաս. զինչ բան և զինչ խորհուրդ զոր ունիս՝ յաջողէ քեզ Աստուած և ի բարին կատարէ:

Յ.

Ով մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի քո. առնուս պարզես ի մեծամեծաց. ուրախանաս և բարույ հանդիպիս: Խնդաս ի զաւակէ և ի կնոջէ քումմէ. և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց. թէ փոխիս ի տեղեացդ՝ ոչ հաստատիս. զի ամենեքեան նենգաւորք են քեզ: Եւ ի մարդոյ բախտ ոչ ունիս, այլ քո բարին ի Աստուծոյ է. և տայ քեզ Աստուած զեւր ողորմութիւնն անչափ. և յամենայն զբժուարութիւնէ ազատիս:

Ի.

Ով մարդ՝ չարն հեռացաւ ի քէն և բարին մօտեցաւ. այլ սասանեցար ի յազգաց և անօրինաց և ազգն քո նենգաւոր եղեն քեզ: Պատրաստ կաց ի թշնամեաց քոց, որ մաօքն չար խորհին քեզ. և ի յընկերացդ փոթորիկ կայ առաջի քո. դատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերեա՛ս:

Փ.

Անզգամ մարդոյ մի՛ լինիր սիրելի՛ն՝ որ յետոյ

չվասիս. և ի ձեռաց քոց իլք ես կորուսեալ, մի տրտմիր՝ ի քեզ դառնայ: Օրինչ խորհուրդ ունիս՝ կատարէ Աստուած. բայց սակաւ մի համբերեա՛ս. դալոց էր ի վերայ քո տրտմութիւն՝ բայց Աստուած խափանեաց. և բազում ուրախութիւն կայ առաջի քո: Նման ես Աբրահամու, որ Աստուած զինքն սիրեաց և ի տրտմութիւնէ ազատեաց. նոյնպէս և դու ազատիս յամենայն չարէ:

Ք.

Ով այր՝ տեսանեմ զքեզ զի մարդ մի լեզուաւ և սրտիւ չար խորհի վասն քո, կամ հոր մի փորէ քեզ, այլ ոչ կարէ վնաս առնել քեզ: Գնա՛ ուխտ կատարեա՛ս Աստուծոյ՝ որ ի շատ չարէ փրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ, այլ Աստուած դարձոյց չարն ի դուրս թշնամոյն քո: Նման ես դու Իսահակայ, որ Աստուած օգնեաց նմա և փրկեաց զնա, և բազում մեծութեան և փառաց հասաւ. նոյնպէս և դու ուրախանաս կամօքն Աստուծոյ, և հասանիս բազում փառաց և պատուոյ:



Երբ Լարդենցու աստուծոյ վշտն ընտար արեւ-  
նան քովս Բանայ գոշուհոն:

**Ի ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ:**

1797. 1825. 1853. 1881. 1909.

**Ե**րբ ի 21 Մարտի արեգակն յառաջին  
կէտն Խոյին մտանէ, տարւոյ իշ-  
խանն լինի մուշթարին ընդ նշանաւ ա-  
ռիւծոյ, որ է տուն արեգական: Յառաջիկայ  
տարին լինի յոյժ պարարտ և առատ ցորե-  
նով, ձիթով, գինեաւ ազրշմաւ, ձկամբ և այլ  
ամենայն մրգօք: Սկիզբն ձմերան լինի ցուրտ  
ընդ կարկտովք մէջն ջերմ: վերջն բարեխառն  
Պարունն ցուրտ և անձրեային մինչ ցՅունիս  
ամիսն: Ամառան անձրեք և որոտք. պակա-  
սին ջուրք յաղբերաց. վասն այնորիկ մեռանին  
բազում եզինք: Եշունն առատացուցանէ զգե-  
տրս: Եսէ Ղեմոկրիտոս՝ թէ երևին հիւան-  
դութիւնք: ՂԵտուած ազլակսցուք՝ զի չեցէ  
մոհ տարածամ: Եր սակաւակեր և արբ առա-  
տօրէն զգինի: Եսէ ևս նոյն իմաստասէրն՝ թէ  
լինի կրիւ:

Յայսմ ամի ցուցանի ևս թէ թագաւորն  
այլազգեաց նեղի և վշտազնի յոյժ ի թշնաւ  
մեաց, գուցէ և ի նոցանէ մեռանիցի հանդերձ  
մեծաւ հարուածով և կորստեամբ զինուորա-  
ցրն: Երևակն յեւանելն իւր և քառանկիւնի  
հայեցողութեամբն ընդ մուշթարւոյն ցուցանէ  
պարիւնահեղ պատերազմութիւնս, վասն այսո-  
րիկ անձկանան և արտնեղին ի թագաւորէն իւր-  
եանց. ցուցանէ ևս զվտանգս թագաւորաց,  
զվէճս, զխռովութիւնս և տարաձայնութիւնս  
նակ զվնաս ի վաճառականութեան:

1798. 1826. 1854. 1882. 1910.

Ի մտանել արեգական յառաջին կէտն Խոյի  
ի Մարտի 21. իշխան տարւոյն լինի լուսարբերն  
ընդ կոյս նշանաւ, որ է տուն փայլածուինե  
Տարիս այս լեցի ամենառատ և յոյժ պարարտ.  
առաւել ի գաշտաւէտ տեղիս՝ քան թէ ի լեռ-  
նայինս. զի մայրեաց սպառնայ կոյսն զժանկ  
և զթրթուր: Վինին ապականի և պակասի  
ի մնալ անապական զինւոյ՝ բարւոք է յետի  
քաղել զխաղողն. միրգք ծառոց առատանան.  
Թռչունք պակասին: Սկիզբն ձմերան լինի մի-  
ջակ և անձրեային մէջն մուսլ. վերջն ցուրտ:



Գարունն բարեխառն և դեջ: Ամսուն յոյժ  
 ջերմն: Աշունն ցրտապաղ և ցուածհար, մտնա-  
 լանդ տղայոց աչնցաւութիւն հանդիպի:  
 Ամսն նաւարկութեան աջողակ է և լաւ. լինին  
 պատերազմուք, հարուածք ծերոց և չորքոտա-  
 նի անանոց: Վիճակրիտէս ասէ թէ եղեցին  
 փասակար կարկտահարութիւնք: Աղաչեցոք  
 զԱստուած, զի մի լեցի երկրաշարժութիւն:  
 Յայսմ ամի երեկն դառնաշունչ կոիւք և կո-  
 տորած մարդոց: Թագաւորն և իշխանք անի-  
 բաւութեամբ դիցեն ի վերայ ռամկաց զճան-  
 բակիր հարկս. հարիցեն բաղում արք վատ-  
 թալք և փճուք, ըստ այնմ նշանակեն արե-  
 գակն հակադիր հայցուածով ընդ Արատին. և  
 Քօհայն յանկեան տաներորդի տան երկնից:  
 Աւ քանզի Արատն գտանի հարկադիր հայե-  
 ցուածով ընդ արեգական, և յերրորդում տան  
 երկնից, և թաւարումն է ցերեկեայ, վասն այ-  
 նորիկ ցուցանի լինիլ արիւնասեղ պատերազմի  
 և անհնազանդութեան առ թագաւորս, և կո-  
 ըրտեան միոյ ռարուք թագաւորութեան: Տե՛-  
 սանին ևս վեճք, խռովութիւնք և վիճարա-  
 նութիւնք, որք լինին ի մէջ եղբարց և բարե-  
 կամաց, ընկերաց և բոլոր տան նոցա:

1799. 1827. 1855. 1883. 1911.

Իշխան տարւոյս լինի Արեւակն ընդ Արց-  
 նշանու, որ է տուն Փայլածուն. երբ ի 21  
 մարտի արեգակն մտանէ յառաջին կէտն խոյնն  
 Արջակ լինի այս տարի ամենայն ինչ. բայց  
 փասն զօրութեան կուսին՝ անկանի ժանկ և  
 թրթուր ի սերմն իս, է փասնդ, և կասկած ի  
 նաւարկութեան: Ակիզեն ձմերան լինի ցուրտ  
 կարկաբե հանդերձ. մէջն ջերմ. վերջն քաղցր:  
 Գարունն լինի ցուրտ մինչև ցյուսնիս ամիսն:  
 Վիճակրիտոս ասէ թէ յաշնան թամնձրանան  
 գետք, և լինին հիւանդութիւնք, այսինքն, ե-  
 րեքօրեայ անդք: Յայսմ ամի բազմանան ա-  
 լազակք, և որք ծնան ի ներքոյ զօհային, ու-  
 նիցն զիբք հաւատ և բարեպաշտութիւն.  
 որպէս զօհայն յիններորդում տան երկնից ցու-  
 ցանէ: Աւս հրատն կցեալ ընդ մուշթարւոյն, և  
 յեօթներորդ տան երկնից՝ ցուցանէ լինիլ սաս-  
 անիկ կուոց և կատարածոց. մեռանին մեծահամ-  
 բու և հարուստ արք. բայց տարին լինի քաղցր:  
 Դարձեալ լուսարեւն յեօթներորդում անկեան  
 երկնից՝ ցուցանէ զաջողութիւն կանանց, և  
 իլլարաբոյ արանց:

1800. 1828. 1856. 1884. 1912.

Յայսմ ամի երբ ի մարտի 21 արեգակն մը-  
 տանէ յառաջին աստիճան խոյնն, իշխէ արե-



գաին ընդ Աշխ նշանաւ, որ է տուն լուսա-  
բերին: Յասաջիկայ ամն լինի ամենառատ. բայց  
ժամ զորութեան կշին՝ գուշակի տարկանու-  
թիւն պաղոց. հարուած մարդկային մարմնոյ և  
պատերազմ: Իսկ առատութիւն մեծ կարկնոյ,  
ձիթոյ, զինւոյ, ապրշի և այլ ամենայն միզաց.  
սկիզբն ձմերան լինի ցուրտ հանգերձ կարկառի,  
և վերջն բարեխառն: Պարունն ցուրտ մինչև  
ցլունիս ամիսն. լինին անձրեք, կարկուտք, և  
չորութիւն. մեռանին բազում եղինք: Ըսէ Բե-  
մակրիտոս՝ թէ զինին լաւ և մնացական լինի  
Տարին աջոպակ ջրեղոյ գործս և պճնեղոյ  
զպարակզս: Երանոյ մարտին գուշակի պա-  
տերազմ: Յայսմ ամի՝ տեսանին պատերազ-  
մունք, ամբոխք, հրկիզութիւնք, տարածայնու-  
թիւնք և շարութիւնք. թշուառութիւնք և  
պղտորութիւն կրօնից, և կրօնուոր կարգաց,  
ի մարդիկ այլևայլ տրամութիւնք. ըստ այնմ  
ցուցանէ մեծ կցորդութիւնն զօհայի և մուշ-  
թարւոյն, որ եղև ի 24 գեկանմեր ամսոյն,  
ի հրային կենդանակերպն: Այսքիկ կցորդու-  
թիւնք, կամ ծնունդք զմեծ վաս նշանակեն,  
և զիւր.ս հաստատուրախ մարդոց վատ-  
թար մահս: Աշանակի ևս այսու ծննդեամբ  
այլևայլ ատելութիւն և դաւ ի մէջ իշխանաց,  
որով փոփոխին իշխանութիւնք նոցա: Եւ այս  
լինի ի փոփոխութենէ յիշեալ ծննդոց ի ջա-  
շին հուսապատութենէ ի հրայինն. որ է յոյժ

չարաֆեսս, զի մարդոց լինին բազում և զա-  
նազան վաստք: Եւ յի Ֆասնիկա է ընդ իշ-  
խանութեամբ մուշթարւոյ, այսր աղագաւ՝ ան-  
կանի նա ի հոլով վաստ: Եւ զի հրատն գը-  
տանի յառաջնում ամն երկնից, է նշան՝ զի  
յայսմ ասի լինի մեծ ափունհեղութիւն: Առ-  
սինն մերձենայ ի մարմին զօհային ցուցանի մահ  
մեծի տիկնոջ. հիւանդութիւնն աամկաց՝ պատ-  
ճառեալ ի ջերմութենէ և ի խոնաւութենէ,  
զլխացառութիւն. ցաւ կանանց և այլ ամին  
նման ցաւք: Թագաւորք և իշխանք յարիցին  
ընդդէմ միմեանց և աամկաց, ժողովուրդք աճ-  
բոխին:



1801. 1829. 1857. 1885. 1913.

Երբ արեգակն ի 21 մարտի մասնէ յառա-  
ջին կէտն և ոյի իշխան տարւոյն լինի հրատն  
ընդ կռիւ նշանաւ, որ է տուն լուսաբերին:  
Ատնորոյ տարին երևի ցամաք և ստերջ:  
Սկիզբն ձմերան լինի ցուրտ, ջրային ընդ սաս-  
տիկ չողմով, յորմէ արմատաքին խլին ծառք.  
մէջն բարեխառն. վերջն ցուրտ Պարունն անձ-  
րեռու: Յամառան չորանան զեաք և պակասին  
խոնաւութիւն. Աշունն եղևմնախար: Պարտե-  
սակաւ հաց ուտել և շատ զինի խմել. զի ա-  
սէ Բեմակրիտոս՝ առատանան զինիք և ձի-



Թուճք: Տարին է աջոգակ անկեղոյ զօրթ և զայգիս, ոչ զծառս: Մեռանին մեծամեծ աւանուճք և ընտանի կենդանիք: Հասանայ տենդն: Աղաչեցուք զԱստուած, զի մի հանդիպեսցի երկրաշարժութիւն: Յայսմ խոսովութեան աշխարհի աեանի զօհալն յերկոտաաւ ներորդում տան երկնից քառանկիւնի հոյեցուածով ընդ արեգական. ևս լուսինն կցեալ ընդ հրաանն յերկորդում տան երկնից, ուր են փատարխոտք: Աւս՝ ցաւցանի ազգի մարդոց վասս, նեղութիւն և ձախորդութիւն մինչ զե ոչ ևս տեսանի սէր, ոչ բարեկամութիւն և ոչ ճշմարտութիւն, այլ հասարակ աւերումն: Յայսմ ամի ի 12 Հոգանմբերի ի 21 և կես ժամու խաւարի արեգակն, երբ ընդ լուսնոյն շրջե յութիւրդոյ տան երկնից, ի ներքոյ կշեռ կենդանակերպի. փանորոյ գուշակի մահ մեծ և հզօր թաղաւորի ուրուք, կամ իշխանի լեւնի սով և հասարակ մահոտրածամ: Ամնայտորիկ թաղաւորք և իշխանք, որք ընդ իշխանութեամբ Առին կամ խոյն ծնան, կրեսցեն զանցկութիւնս և առաւել նեղեցոյն քան զայլս:

1802. 1830. 1858. 1886. 1914.

Ի 21 մարտի ի մտանել արեգական յառաջին աստիճան Խոյին. իշխան սարոյն լինի

Փայրածուն ընդ կշեռ նշանաւ: Առաջեկայ տարին լինի ամուլ և սակրճ. աւերում պտղոց, հարուածք մա. րոյ, մահ պեծակայ և մեղուաց. և ծանաւորի ցաւ: Միկըն ձմեռան ցուրտ. մէջն բարեխառն. վերջն զարմանային, յոյգապաղ, սառնամամաւ. ևս, անձրև սյորոյ, և թանձրութիւն գետրէկց: Գարունն անձրևոտ. ծառք վասին յանձրեաց վերջն ի տեղիս տեղի կարկասհարի: Աման անձրևային և մառախլապատ. պարս է փութով վճարել զհունձն, զե մի աւերեսցի: Աշունն քամահար և առողջաւար. որթք զյոյով խաղողս անեն. բարւոք և աջոգակ է անկէն զոյսս և տեղափոխել զօրթս. ցորեանն զխրեաւ ապականի. ասրին անցանի տանց հիւանդութեան: Աղաչեցուք զԱստուած փան պտղոյ. տարիս է առաւանձրև. և լինի տարածայնութիւն ի մէջ իշխանաց: Յայսմ ամի տեսանի աւերումն գաւառի կամ քաղաքի միոյ. այլ և անաջողութիւն, նեղութիւն, և բազում վասս մարդոյ: Աւ զե Մառեխն զանի յիօթներորդ տան երկնից քառանկիւն հայեցուածով ընդ փայլածուն, և Օօհայն յութերորդում տան երկնից ևս քառանկիւնի հայեցուածով ընդ արեգական. փանորոյ գուշակի մահ ընդ մարդոց, սառել ևս տեսանի նրբութիւն և խորամանկութիւն ոմանց, որք այլոց զխորխորատ փորելով ինքեանք անկցին ի նոյն: Հանդիպի գերութիւն և բան



տարկութիւն մարդոց՝ առաւել քան դժգոհն. ի մէջ պարոնաց, և ի մէջ արևելայ նահանգաց երևին տարածայնութիւնք, մինչ զի ոչ ևս ճանաչի հաւատարմն և բարեկամն: Օհայն ձախակի հայեցեալ ի հրաան, ցուցանէ փննգութիւնս, մատնութիւնս և գտտախորհուրդքս, յորմէ ի բազում տեղիս հանդիպի աւերումն և խանգարումն:

1803. 1831. 1859. 1887. 1815.

Յայտ ամի երբ արեգակն ի 21 մարտի մտանէ յառաջն կէտն Խոյնի, իշխէ Մուշթարին ընդ կարծն նշանաւ, որ է տուն Հրատին: Յառաջիկայ տարիս է առատութիւն յրբնոյ, գինեոյ, ձիթոյ, ապրշիմի և ձկան: Իսկ փան զօրութեան կարծին ձմեռն լինի բազմաձիւն և կոտորած անասնոց, որք յանդեպս արածին. մէջն ձմերոն և բարեխառն և քամոտ. վերջն գէջ, եղևմտոտ, խաւարչուտ և խան ցաւագարութեամբ: Ըմուն լինի նման զարնան: Տարիս է կասկածոտ փան յղի կանանց. առատութիւն մրդոց: Ըսէ Դեմոկրիտոս՝ թէ յայտըմ ամի շատանան գեաք, կարկուտք նոսրանան: Ըշունն ջրային ձիթունք լինին բաւական այսպէս միտն և փուն. գուշակի պատերազմ, որոտմունք ևս յամառան եղանակին:

Հրաան գտանի ի տաներորդ տան երկնից. ուստի բազում կոտորածք, աստիկ պատերազմ և հիւանբութիւն, սակաւ հաւատարմութիւնք ի մէջ մարդոց: Առաւորն ի մէջ երկնից, և ի շառաւիղաց յարեգական, ցուցանէ զմահ թագաւորի. զնոյն ցուցանէ և Հրաան ընդ նշանին ի մէջ երկնից: Մուշթարին յութերորդ տան երկնից՝ թուի թէ յուցանէ զյանկործական մահ. և զի նոյն Մուշթարին է կցեալ ընդ Փայլածուն՝ ուստի ցուցանէ զփոփոխական բարս փաճառականաց: Մահուամբ հարին երեխայք, ըստ այնմ նշանակէ Փայլածուն յութերորդ տան երկնից. լինն գտնապան հիւանգութիւնք, հարուածք անասնոց, փտոսք ծառոց և պողոց: Ժողովուրդք գտուժանս կրեացն ի տեսոց. հոգն ոչ բարեոք պողպեքի, և ամենայն խոպանութիւն երեկ միջտիօրէն, ըստ որում ցուցանէ լուսինն կցեալ ընդ երևակին, երևակն ի վեցերորդ տան երկնից, ևս լուսաբերն յիններորդ տան երկնից, և առիւծ կենդանակերպն ի ժամապէս տեղուոյ:

1804. 1832. 1860. 1888. 1916.


Երբ արեգակն ի 21 մարտի մտանէ յառաջն առաջն Խոյնի, լուսարեւն լինի իշխան տարւոյն ընդ կարծն, որ է տուն հրատին:



Յառաջիկայ տարիս լինի յոյժ պարսրոս և առաջ ցորենոյ և այլ պտղով: Այլ ցորն ձմերան լինի ցուրտ ընդ կարկտիս մէջն ջրով, և վերջն բարեխառն: Գարունն մինչ ց յաւնիս սեփարն ցուրտ. ցուցանէ ևս գանձրես և զօրոսմունս. բայց յետոյ պակասն ջուրը յայրեւոյց, վասն որոյ մեռանին բազում եղբորս: Եւ ի Վեմսկիստոս թէ յաշնան սմին գետը և լիցն Տիււանդութիւնը, աղօղակոյց զ՝ ստուած, զի չեցէ մաստարածամ: Պարս է լինիլ սակաւակեր, և շատ բնակչ զղինի. ի սկզբն ձմերան, անձրեւէ, և ձիւնէ աւելի քան զչափն:

Յայտմ մի շատոնայ անկոն, և այլ հիււանդութիւն պատճառեալ ի ջերմութենէ, բառայնմ նշանակէ լուսնթագն ի վիջերորդ տան երկնից: Գարձեալ տեսանի մեծ հարուած՝ մասնաւոր ծերոց և երեխայից. կանոնց աւերումն, օրպէս գուշակն հրասն կցեալ ընդ երեւակին, և քառանկիւնի հայեցուածոյ ընդ շէմին, փայլածուն բորբոքեալ ի շառախոց արեգական, քառակուսի հայեցուածոյ ընդ մասեխին, այլ և ի վիջերորդում տան երկնից լուսաբերն կցեալ ընդ տուս վիշաղին, և լուսինն եղեալ լուսնթորոզ տան երկնից: Յարիցն վիճմուկը և կոխը, այլեայլ արանց ընդդէմ թագաւորին իւրեանց: Եւս անկանի տարածայնութիւն ի մէջ կղզայց և սիրելեաց, որպէս ցուցանէ հրասն կցեալ ընդ երեւակին, և

քառակուսի հայեցուածոյ ընդ արեգական յերբորբում ան երկնից: Տիրեն նեղութիւնը և խաբութիւնը ի մէջ գրագրոց և փաճառականաց, որ անգաւ հանդիպի նոցա մեծ գժուարութիւն և նեղութիւն, բառայնմ ցուցանէ փայլածուն բորբոքեալ ի շառախոց արեգական և քառանկիւնի հայեցուածոյ ընդ հրասին: Երբունի սպասաւորաց լինի մեծ փայլ և նեղութիւն, զի տէրն տաներորդ տան է փայլածուն, որ քառանկիւնի հայեցուածոյ և մասամբ հայի ի հրասն:



1805. 1833. 1861. 1889. 1917.

Յորժամ ի 21 մարտի արեգակն յառաջին կէան խոյին մասնէ, իշխան տարւոյն լինի նոյն արեգակն ընդ աղեղնաւորին, որ է տուն լուսնութագին: Յառաջիկայ տարւոջ լինի պարարտութիւն ցորենոյ և այլ թէթեւագին իրաց:

Այլ ցորն ձմերան բարեխառն լինի և ջրային. մէջն յորդութիւն գետորէից. վերջն ցուրտ, և քամի: Գարունն հարուային և անձրեային: Եմասն բարեխառն՝ հով և զով. կանուխ հաւաքել պարտիս զպտուղս, զի մի աւերեսցին յանձրեաց: Յաշնան հաւաստի հնչն տարեկան հողմք պտուղք լինին բարեհամք և զիւրահասք. ճաքաղութիւնն է մնացական, և այլ



ճուր, պարարտութեբ լինին: Տեկել զառնկա լաւ է: մեռանին մեծամեծ անասունք և շատ շունք: Օտին ալեծփի: ակարութիւն երկխա- յից յետի բայիէ շնչան ատուոյս: Յայսմ ամի անտանի բարոմ արիւնհեղութիւն, և զանա- զան մտաստհարութիւն. զի զօհարն գտանի ընդ ատու վիշապին, և նոյն երեւակն երեխ յառաջ նում տան երկնից, փան որոյ լինին պատերազ- մունք, սարմուսթիւնք, և վատ թարաւորաց. վիճմունք, խոտութիւնք, տարաձայնութիւնք, և փասք ի վաճառութանս: Օնոյնն գուշակէ հրտան ընդ լուսնթագին կցեալ և քառանկիւնի հայեցուածով ընդ երեւակին եղ- եալ յանկեան երկրի: Մարդիկ պատրաստե- ցին զճանապարհս առնել ի հեռի աշխարհ, և տեւոցեն ի հայրենեացն յանվանագս վաճառա- կանութեան, բոտ այնմ փայլածուն յերրոր- զում տան, և լուսինն յիններորդ տան երկնից նշանեն. զի փայլածուն և լուսին իշխեն ի վե- րայ ճանապարհորդաց, նաւորդաց, և վաճա- րական արանց:

1806. 1834. 1862. 1890. 1918.

Ի մտանել արեգական յառաջին աստիճան խոյնն ի 21 մարտի՝ իշխան տարւոյն լինի լու- սինն ընդ տղեղնաւորին, որ է ատն լուսնթա-

դին: Յառաջեկոյ ամն պարա է պարարտ մի- ջակորէն զի անձրեւէ քան զչափն անելի: Չմե- ռն լինի բարեխաան. մէջն գեջ, ազման և քա- մաւ. վերջն յորոմ թիւն ջրոց. կարկուտք և ձիւնք. զինի ելանեղոյ շնիկ աստեղն, երեխ ջեր- մութիւն և ցաւահարութիւն: Տարեկան քա- միք հնչեցնն: Գաւշակի երկրաշարժութիւն. զաշտայինք առաւել պարարտութեբ իցին քան զմայրիս, ցորենով, ձիթով, գինեաւ, և այլ պրաղովք: Տարիս է աջողակ վան փոքր ա- նտանոց, բայց ձմախորդ երեխ մեծամեծ անաս- նոց: Յաշնան ժամանակի երեխն դիւաջառ ու- թիւնք և աշտցաւութիւնք: Ազաւեա զԵս- տուած, զի սառնամանիք ոչ փասեցնն պրա- ղոց. և մի յամառան իցեն հիւանդութիւնք: Լուսնթագն յառաջին տան երկնից նշանակէ զառողջութիւն մարդկոցին անպամոց: Երեւակն ի տամներորդ տան և սոււա վիշապին կցեալ ընդ հրտարն, և հրաստ ի շարժուն կենդանու- վերան, են նշան արիւնահեղ պատերազմոց և կոտորածոց: Թագաւորք և իշխանք զանտա- նելի հարկս զիցեն ի վերայ ժողովուրդան, և զանհաճոյ և զանիրաւ արարս ցուցցին: Երե- շին աւաղակք և դողք այնքան, մինչ ցճանա- պարհորք ոչ իցեն անկասկածք. որպէս հրա- տըն յիններորդ տան երկնից ընդ ատու վիշա- պին ցուցանէ: Եւ զի ասոցեալ հրտան գտա- նի ի տանն երեւակին, և երեւակն ոչ հոյի ի



հրատն: ուստի կարծի թէ՛ բանաբ բանա թեանք  
բացցին, և բարուք ելցին ի բանախց: Փայր-  
ծուն յերկոտասաներորդ տան երկնից նշանակե  
զանկուսն վաճառականաց և իմաստնոց: յառա-  
ջին փառացն և ի պատուոյն:

1807. 1835. 1863. 1891. 1919.

Յորժամ արեգակն ի 21 մարտի մտանէ յա-  
ռաջին կէտ խոյնն իշխան տարւոյն է մտանէ  
ընդ այժեղ ջեր, որ է տուն երևակին: Տարին  
յառաջիկայ լինի ցամաք: անհուն պատերազ-  
մունք: Չմեան անձրևային, և առատութիւն  
մարտից. ամն բոլոր հիւսիսային և քանա ի  
տեղին տեղին: Օհնի գարնանամախն երևի  
մահաարածամ: մշտակայ անձրևք յորդութիւն  
և թանձրութիւն գետոց: Ըմանն բարեխաան  
և առողջալար: Ըշունն քամոտ և ջերս: ցա-  
ւահարութիւնք, գլխացաւութիւնք և իջուածք:  
հազք մանաւանդ ի լեռնային տեղին: Ըղա-  
ջեսցուք զԸստուած, զե չեցէ պատերազմ: Ըտ  
Ղեմոկիրաոս, թէ զինք լինին բարեհամբ, և  
բոլոր տարին աջողակ: կանխեան հաւաքել ըզ-  
պատուոս սակս անձրևաց: երևակն է յանգեան  
եօթերորդ տան երկնից ուստի թուի թէ լինին  
կոխք և կոտորածք. նոյն երևակն կցեալ ընդ  
լուսաբերին ցուցանէ զմահ անուանի և հա-

րուստ արկնոջ: Ը ուսինն կցեալ ընդ գլուխ վե-  
շապին գուշակէ մահ արանց գովութեան ար-  
ժանեաց. աւերումն, և վնաս պտղոց. շէմն է  
յիններորդ տան երկնից, ուստի թագաւոր մի  
արասցէ զճանապարհ: լինին որպէս կարծի ա-  
հազին երկրաշարժք, զի հրատն է ընդ լուս-  
նոյն:

1808. 1836. 1864. 1892. 1920.

Յորժամ ի 21 մարտի արեգակն յառաջին  
կէտն խոյնն մտանէ. իշխան տարւոյն լինի փայ-  
լածուն ընդ այժեղ ջեր, որ է տուն զօհարին:  
Յառաջիկայ ամն է երաշտ և ցամաք: խոռ-  
վութիւն մարդոց, կոտորած մեծամեծ անաս-  
նոց, աջողակ մանր շորքաանի կենդանեաց,  
սակաւ ձէթ, շատ գինի և միրգ: Սկիզբն ձմե-  
րան ցուրտ, մէջն անոյշ, վերջն հողմակոծ:  
Պարունն ջրառատ, ցուրտ և եղեմահար: Ը-  
մանն անձրևոտ վան սաստիկ հողմահոսու-  
թեան. բաժին ինչ ցորենոյ և արտորէիցն վնա-  
սի. ուղիք և հեղեղք ջրոց: Յաշան հնչն  
ջրածին քամիք: Ըայեսցուք Մատուծոյ զե մի  
լնչի սաստիկ տենդ տղայոց և արանց: Ըդեամն  
որ է սառուցեալ ցող ի բազում տեղին վնաս  
խաղողոյ. յարտորոյս զայցեն գազանք անտա-  
ռի և լեռնունք: Ըղթեսցուք առ Ըստուած,



զի մի՛ երևելցի մահտարածամ, երկրաշարժութիւն և կայծակնահարութիւն: Յայտ՛ ամի արեգակն է ի վեցերորդ ասն երկնից. ուստի սաստիկ հիւանդութիւն, ցուազարութիւն, մահաւանդ յաչս. հարուստք և կոտորածք անասնոց. պահասութիւն ձիթոյ, զի կշիւն է ժամագէտ: Փայլածուն արեւելեան, և կցեալ ընդ երևակին՝ ցուցանէ մեծ վնասուց և սուժանաց հանդիպիլ թագաւորին, և արքունի գրագրաց. առասանան և ցնծան երաժիշք ընդ կուսանաց: Լուսաբերն յեօթներորդ ասն երկնից նշանակէ զաջողութիւն կանանց, և իգաբարոյ արանց. բայց լրակի ցուցանէ զհարուստ և առակաց, զոր և զօհայն հինգերորդ ասն երկնից նշանակէ: Եղիցի մեծ կոխ, սպանութիւն և հեղուքն արեան. բազումք ի բանասարկերցն փոխիցեն, ըստորում ցուցանեն հրբանս յանկեան երկնի, ի զօհայն, և զօհայն սուանց հայեցուածոյն ի հրբանս:

1809. 1837. 1865. 1893. 1921.

Երբ արեգակն ի 21 մարտի մասնէ յառաջին աստիճան Խոյի. իշխան տարւոյն լինի լուսաբեր մոլորակն ընդ այժեղ ջեր կենդանակերպին, որ է օթեան երևակին: Յայս առաջիկայ ամն լեցի յոյժ սոսաութիւն ցարեւոյ, զինուոյ:

մեծաբախ, (այրշնի) և այլ մրդաց: Այլեզն ձրմեքան լիցի ցուրտ և կորկոտախառն. մէջն ջերմ իսկ վերջն բարեխառն: Գարունն ցուրտ մինչև ց 21 յունիսի: Լմաւան անձրևեացէ և երբեմն որոտայցէ: Ըսէ Կեմակրիտոս. թէ յաշնան ժամանակի լիցի առասութիւն արքերաց և շարժեցնն հիւանդութիւնք: Գարտիմք զգուշանալ յորկրամելութենէ, և առաւել ևս յարբեցութենէ: Յայտ՛ ամի՛ զի լուսնթագն յետաքայլ, և շրջադանի, և վատարախա յերևակէն. է նշան թէ թագաւորն պատժիցէ զեւր հպատակս, և ևս թէ լինելոց են մեծամեծ պատերազմունք. զի լուսնթագն գտանի յութերորդ ասն երկնից: Կարձեալ հրբան քառանկիւնի հայեցողութեամբն ընդ երևակին և լուսնթագին, նշանակէ հոլով պատերազմունս, և զինուորական կործանմունս: Ես և քանդի տասցեալ հրբան ընդ լուսնթագին տիրեն տասներորդ ասն երկնից, է նշան թէ թագաւորն վասն պատերազմի կըլէ յեւր երկրէն և արտացէ ճանապարհս: Կարձեալ զի հրբան հայեցեալ ի լուսնոյն քառանկիւնի հայեցողութեամբ, ցուցանէ լինել զանազան հիւանդութիւնս մարդոց, հանդիպիլ ջերմութեան և շարութեան. ևս սով և մահտարածամ, ստտակուքն կենդանեաց: Ուամկական ժողովուրդք վնասին յիշխանաց, ըրմ. ցուցանէ լուսինն կցեալ ընդ երևակին: Եւս զի արեգակն գտանի յերրորդ



տան երկնից, նշանակէ թէ թաղաւորն առեալ ընդ ինքեան զարս քաջս, առնելոց է ճանապարհս:

1810. 1838. 1866. 1894. 1922.

Ըսք արեգակն ի 21 մարտի. մտանէ յառաջին աստիճան խոյնն, իշխան տարւոյն լինի երեւակն ընդ ջրհոսին: Յառաջիկայ ամն լիցի առատութիւն ընչեց, ուրախութիւն ի մէջ մարդկան. մահ անասնոց և թռչնոց. ի բոլոր տարին հնչեցեն հարաւային հողմունք: Սկիզբն ձմերան լիցի քամոտ. մէջն բարեխառն. վերջն սառնամանիք և հողմունք: Գարունն լիցի բարեխառն և սակաւ անձրևոտ: Եմառն լիցի նոյնպէս բարեխառն, և հնչեցեն հողմունք բարեհամրոյրք. պտուղք լիցի առատ, բայց միողք ապականեալք: Յաշնան երևեցին տկարութիւնք, մտնաւանդ ի մէջ երկոտասանորդաց, իսկ ի մէջ կանանց ջրհոսութիւնք աշտոյ, յորմէ մեռանիցին ոչ սակաւք: Ընչիցին ևս ըստ կարծեաց Նեմոկրիտոսի, վնասարեք կարկուտք: Տէր Ետուած փրկեացէ զմեզ ի տարածամ մահուանէ:

Յայսմ ամի թուի թէ՛ ոամիկք կրեցեն յիշխանաց իւրեանց բազում ծանրութիւնս և բռնութիւնս, ևս և՛ ծանր տկարութիւնս սակա

արեան ապականութեան: Մահ արանց այնուցիկ որք ընդ երեւակաւն ծեան, և որք անցեալ են զամբք ըստորում ցուցանէ երեւակն կցեալ ընդ արեգակն և մերձ ի դուրս վերապին. որք աղաղաւ նշանակէ զոչխարաց, և զայլ անասնոց մահս: Գարձեալ լուսնթաղն գտանի ընդ սուտ վիշապին և ընդ վնասակար դիրս գետեղեալ և այս ցուցանէ գնահ մարդոց, զտկարութիւն, զանհաւատարմութիւն, զանքատութիւն, զտենդ և զջերմեռանդն ակտո: Եւս և զի արեգակն գտանի յերկոտասաներորդ տան երկնից, նշանակէ թէ թաղաւորք ունիցին գնեղութիւնս, և ընտանիքն զանապան խորհուրդս դիմակցութեան ընդ թաղաւորաց: Ի վախճանի՝ զի փայլածուն գտանի ի մետասաներորդ տան երկնից, նշանակէ թէ թաղաւորն հրաւիրէ և պատուէ զարս իմաստունս:

1811. 1838. 1867. 1895. 1923.

Յարժամ արեգակն ի 21 մարտի. մտանէ յառաջին աստիճան խոյնն, իշխան տարւոյն լինի արեգակն ընդ ջրհոս կենդանակերպիւն: Տարին լինի առատ ցորենով, գինեաւ, և այլ թեթեւագին ընչիւք. յորդ անձրև. մահ թռչնոց յարեւելեան ձմերանցին կողմունս. զի յայտասիկ կողմունս լիցին ցուրտ մառախլապատ, և հե-



դեղք ջուրց: Օ կնի գարնանամսին ի խիստ  
 և ի լեռնային տեղիս երևեացին կարկուտք. բայց  
 պողպատե թիւնն լեցի առատ: Բոլոր տարին  
 լեցի առողջարար բաց յաշնանային եղանակէն:  
 Պարտ է կանխաւ քաղել զպտուղս զի մի վը-  
 նաւիցին յանձրեաց:

Յայսմ ամի պտուղք և միրգք լեցին բարե-  
 համբ, հոլովածուծք, փութահասք և մնացա-  
 կանք զկնի պողպատե թեանն. ծառք պա-  
 րարտք և պողպտեք բարւոք է անկելն. մահ  
 մեծամեծ կենդանեաց, ոչ սակաւ ախիտձու-  
 թիւն ճովու. ուժգին և սաւորի հողմունք:  
 Օտանրագնաց թուի յառաջիկայ տարիս քան  
 զհասարակն և զտվորականն: Յայսմ ամի երե-  
 ւեացին բարում աւազակք, և բարեպաշտու-  
 թիւն բարձրի ի մարդկանէ, ըստ որում երևակն  
 ցուցանէ լեալ յիններորդ տան երկնից: Եւ զի  
 է հայեցեալ քառանկիւնի հայեցողութեամբ  
 ի հրատէն զնուորք վեճեացեն ընդ միմեանս,  
 և փոփոխեացին ի տեղւոջէ ի տեղիս: Եւ զի  
 վերոյիշեալ հրասն գտանի յերկոտաստներորդ  
 տան երկնից, նշանակէ զբազմաց դանակաւ և  
 սրով սպանումն: Եւս և զի արեգակն գտանի  
 յիններորդ տան երկնից, և կցեալ ընդ զլուս-  
 փշապին, ցուցանէ թէ թագաւոր մի առնէ  
 ճանապարհ. ցուցանէ ևս զմահ հզոր արանց  
 և զայլ մարդոց: Չքաւցին թագաւորքն, որք  
 ունու թեամբ կամիցին թագաւորել, և զայլ

իշխանութիւն ընդ տէրութեամբ ամել: Պար-  
 ձեալ լուսարբերն և փայլածուն բախտազորիք  
 և այրեցեալք, նշան է վնաս ինչ հանդիպելոց  
 ուսմկաց ի թագաւորէն, և թագաւորին ի սամ-  
 կաց: Ի փոխմանի իշխօնն տասներորդ տան է  
 անբախտ, և մինչ այրեցեալ ևս գտանի յան-  
 կեալ տան, ցուցանէ զանձկութիւնս, վշտարկու-  
 թիւնս, և վնաս արքունական պաշտօնէից:

1813. 1814. 1815. 1816. 1817.

1812. 1840. 1868. 1896. 1924.

Երբ արեգակն ի 21 մարտի մտանէ յառա-  
 ջին աստիճան խոյն, իշխօղ տարւոյն լինի լու-  
 սինն: Եւ զի լուսինն գտանի ի մեջ երկնից, ի  
 տան լուսնթագին, որ է ձուկն, յառաջիկայ ամս  
 լինի առատութիւն ցորենոյ և զինոյ, յաճախ  
 կարկուտ ի լեռնային կողմունս. սպուղք ա-  
 ռատանան. գեաք յորդանան. տարին բոլոր լի-  
 նի առողջարար բաց յաշնան եղանակէն, յու-  
 ռում գուշակի մահ կանանց: Եւս Երեմիակրիտոս  
 ճնանին շուրջ զերանոյն ճորակք. ուստի  
 պարտին մանաւանդ երիտասարդք ըմպել ըզ-  
 գինի, և ոչ զջուր միայն ի գարնան եղանա-  
 կին. ձիթենիք ոչ առատ երևին: Յայսմ ամի  
 զի լուսնթագն գտանի յերրորդ տան երկնից,  
 նշանակէ զբարեբախտութիւն և զաջողութիւն  
 մարդկան: Եւ զի կշեռն գտանի ընբախտի կի-



տու մի, նշան է ձիթոյ նորագութեան: Եւս՝ զի  
հրատն կցեալ երևի ընդ դուխ վեշապին, երևի  
Թէ մարդիկ առցն զգէնս, և ընդ միմեանս  
մարանչիցին: Ի վախճանի զի երևակն գտանի  
յանկեան անդ, նշան է սասաիկ պատերազմի  
և ուժղին կատորածի:

1813. 1841. 1869. 1897. 1925.

Յարժամ ի 21 մարտի մտցէ արեգակն յա-  
ռաջին աստիճան խոյին, իշխող տարւոյն լիցի  
փայլածուն. փան զի գտանի ի մէջ երկնից ի  
տան լուսնթագին, (որ է ձուկն), յիւրում բարձ-  
րութեան, և յիւրում յառաջնում հայեցողու-  
թեան: Ասան որոյ ասելի է յայսմ ամի դու-  
շակի կատարեալ հաւարումն ցորենոյ և մահ  
մեղուաց. ախա ժանտարեր և պտղոց ապակա-  
նութիւն: Ակիլքն ձմերան լիցի անձրեային  
ցուրտ և որտախառն. մէջն բարեխառն. իսկ  
ի վերջն սասակութիւն աստնամանեաց, անձ-  
րեաց և գետոց: Գարունն անձրեային և փա-  
սակար ծառոց մինչև ցաւարան. ի անդիս ան-  
դիս լինին կարկուտք: Ըմանն անձրեային և  
մատաղապատ. պարտիւք կանխաւ քաղիլ ըզ-  
հունձն, զի մի սպականիցին: Աշունն լիցի  
հողմաշատ և առողջարար. որթք բազմախա-  
ղողք. անկէ զձառս, և զարմատս շահաւէտ

է, ցորեանն դիւրաւ սորսկանի: Պարտէ աղու-  
չիլ զԵստուած փան պտղոց. ևս զի չիցէ  
խտոյութիւն ի մէջ իշխանեաց: Յայսմ ամի  
տեսցի սասաիկ մահ մեծամուռ և հարուտ կա-  
նանց. զի երևակն և լուսարերն գտանին կրց-  
եալք: Դարձեալ լուսնթագն յառաջնում աստն  
երկնից՝ նշանակէ զսպառութիւն մարդոց յա-  
մենայն հիւանդութենէ, պատահեցին սասաիկ  
պատերազմուք և սպանութիւք. մանաւորի  
թագաւորս, և ի յօգնիս իւրեանց. ըստորումն  
ցուցանին երևակն յանկեան և հրատն յութ-  
եկորդ ասան երկնից:

1814. 1842. 1870. 1898. 1926.

Ի մտանել արեգակն յառաջին աստիճան  
խոյին ի 21 մարտի. իշխող տարւոյն լինի լու-  
սնթագն: Քանզի ստ գտանի ի միջն երկնից  
ի տան հրատին, որ է խոյն, ուր գոյ իւր բարձ-  
րութիւնն յիւր յառաջին հայեցողութեան:  
Ասան որոյ կարելի է ասել, թէ աստիճակոյ  
տարիս լինի պտղարեր, և աստ ցորենով, զի-  
նեաւ, մեղով, ձիթով, վշով, ապրիմաւ, ձր-  
կաւք, և ամենայն բարեհամ պտղովք: Ան-  
բողբ բարի և խաղաղ բաց ի պատերազմէ:  
Ակիլքն ձմերան ցուրտ, հանդերձ կարկուտք  
մէջն ջերմ. վերջն հանրարտ: Գարունն ցուրտ



մինչ ի 22 յունիսի. նշան է անձրևաց՝ և որոտմանց, պակասին ջուրք յաղբերաց. մեղցին եղինք ոչ սակաւք: Օգինի աշնան աճին գետորայք լինին հիւանդութիւնք: Եղաւսցուք զԱստուած, զի չիցէ մահտարածամ: Պարտիճք լինել սակաւակերք և զգուշանալ ի ջրոց: Երբ զի յայսմ ամի արեգակն գտանի յերկոտասաներորդ տան երկնից՝ ընդ հրատին, ցուցանէ թէ թագաւորն այլազգեաց յոյժ նեղիցի յիւրոց թրշնամեաց, զուցէ ևս ի նոցանէ սպանիցի ընդ սատակմամբ բազում զինուորաց: Եւս՝ զի երեւակն է յեւն, և ի քառակուսի հայեցողութեան ընդ լուսնթագին, ցուցանին արիւնահեղ պատերազմունք. վասն որոյ՝ ի կողմանէ թագաւորին հասանիցին մարդոց սաստիկ նեղութիւնք և տրամութիւնք: Եւս նշանակին վատանգ թագաւորաց, վէճք, տարաձայնութիւնք, և վնասք ի վաճառականութեան:

1815. 1843. 1871. 1899. 1927.

